# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.06.2017



Սիրելի՛ երեխաներ,

Շնորհավորում եմ ձեզ աշխարհի թերևս ամենալուսավոր ու հրաշալի տոնի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:
Յուրաքանչյուրիս պարտքն է ապահովել երեխաների անհոգ մանկությունն ու շուրջ տարին նրանց պարգևել հունիսմեկյան բարձր տրամադրություն: Դուք մեր ապագան եք, ուստի մենք՝ ավագներս, անում ենք ամեն հնարավորը, որպեսզի հայրենիքի վաղվա պաշտպանը, վաղվա քաղաքացին ու առաջընթացի շարժիչ ուժը մեծանան արժանապատվորեն՝ խաղաղ ու բարեկեցիկ պայմաններում:
Կրկին շնորհավորում եմ ձեզ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ և մաղթում անհոգ ու արևառատ մանկություն:

Արարատի մարզպետ՝

Արամայիս Գրիգորյան